ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ —ԴՐՕՇԱԿՆ ՈՒ ԶԻՆԱՆՇԱՆԸ—

Կիլիկիոյ հայկական թագաւորութեան անկումով՝ վեց դարեր շարունակ, հայ ժողովուրդը պետականութիւն չէր ունեցած եւ ճիշդ ատոր համար այնքան մեծ էր Հայաստանի Հանրապետութեան հռչակման նշանակութիւնը հայ կեանքի մէջ։ Հայ ժողովուրդը ունեցաւ իր սեփական պետական կառոյցը՝ հանրապետական վարչաձեւով, սեփական բանակով ու դրօշակով։ Մրագիրդրօշակը դարձաւ ընդունուած, ճանչցուած դրօշակ։ Այս մասին երբ Օգոստոս 1ին պաշտօնական բացումը կատարուեցաւ Հայաստանի Խորհուրդին, Հայաստանի Հանրապետութեան վերջին վարչապետ Սիմոն Վրացեան գրած է.

«Հաստատուեցաւ Հայաստանի ազգային դրօշակը՝ հորիզոնական՝ կարմիր, կապոյտ ու նարինջի գոյներով։ Դրօշակի ձեւի եւ գոյներու շուրջ եղան բաւական երկար խորհրդակցութիւններ. նկատի առնուեցան հայոց պատմական դրօշակները, լսուեցաւ հայկաբան Ստ. Մալխասեանի հիմնաւորուած զեկուցումը հայկական դրօշակի մասին եւ ի վերջոյ, որոշուեցաւ ընդունել վերոյիշեալ երեք գոյները՝ պայմանով որ վերջնական հաստատումը կատարուի սահմանադիր ժողովի կողմից, որը պէտք է գումարուէր Հայաստանի երկու հատուածների միացումից յետոյ» (1)։

Ժողովին պատկերը հարազատ կերպով տուած ըլլալու համար Ս. Վրացեան կը շարունակէ ժողովին նկարագրութիւնը.

«Գոյների ընտրութիւնն ու դասաւորութիւնը, աւելի շատ, արդիւնք էր ֆուէարկութեան պատահականութեան։

«Պատգամաւորներից մի մասի կողմից մասնաւոր առարկութիւն էր լսւում — գլխաւորապէս գործածական տեսակէտից — նարնջագոյնի դէմ — Հայաստանում դժուար էր այդ գոյնի կտոր գտնել։ Առաջարկւում էին փոխարէնը դնել կանաչ գոյն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գոյներից մէկն է։ Բայց նարնջագոյնը առանձնապէս պաշտպանում էր Քաջազնունին, որ ղեկավարում էր սոսկ գեղասիրական նկատումներով. նրա կարմիր, կապոյտ եւ նարնջագոյնի ներդաշնակութիւնը դիւր էր գալիս նրա ճաշակին։

«Կայիսն, սակայն, հայկական եռագոյնի մէջ եւ գաղափար ու խորհուրդ դնողներ։ Այդ գոյները, կարծես, բխում էին մեր կեանքից, խորհրդանշում էին հայ պետականութեան ծագումն ու ապագան։ Կարմիրը հայ ժողովուրդի թափած արիւնն էր, կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը եւ նարնջի կամ ոսկու գոյնը՝ խտացումը աշխատանքի։ Հայ ժողովուրդը, որ արիւնով էր ձեռք բերել իր ազատութիւնը, հայրենի կապոյտ երկնքի տակ, իր համաբաւաւոր աշխատութեամբ՝ պիտի վերաշինէր երկիրը եւ ապրէր ազատ ու երջանիկ» (2)։

Մենք սակայն դրօշակին ընտրութիւնը «ֆուէարկութեան պատահականութեան չենք վերագրեր։ Կը հաւատանք որ Հայաստանի Խորհուրդի առաջին նիստին ներկայ ժողովականները ծանօթ էին Շահամիրեանի ապագայ Հայաստանի դրօշակի ծրագրին որ այնքան ճաշակաւոր ըմբռնումով մը նոյն գոյներով սահմանած էր Հայաստանի դրօշակը. նաեւ առաջարկուած իւրաքանչիւր գոյնին հետ մտքերու մէջ կար այդ գոյնին խորհուրդը։

Իսկ Հայաստանի Հանրապետութեան զինանշանը աւելի ուշ է որ ներկայացուած է Հայաստանի Հանրապետութեան խորհուրդին, որուն մասին ամենաիրաւասու աղբիւրը ինքը՝ Ս. Վրացեանն է.

«Ցուլիսին (1920) կառավարութիւնը հաստատեց Ակդ. Ալ. Թամանեանի կազմած եւ նկարիչ Կոջոյեանի գծած Հայաստանի Պետական Զինանշանի (Գերբի) նախագիծը։ Զինանշանի կեդրոնում կար վահանաձեւ մի տարածութիւն՝ բաժնուած չորս մասի, իւրաքանչիւր մասում տեղաւորուած էր հին Հայաստանի չորս անկախ շրջաններից մէկի զինանշանը՝ Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց, Ռուբինեանց։ Մէջտեղը դրուած էին մեծ ու փոքր Մասիսները եւ նրանց վերեւ՝ Հ. Հ. տառերը։ Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիւ եւ մի առիւծ, իսկ ներքեւը՝ սուր, գրիչ, հասկեր ու շղթայ։



28 Մայիս 1919. Հայաստանի Հանրապետութեան զինանշանի՝ տօնական կամարի եռակապին

«Այս զինանշանը լուրջ առարկութիւններ առաջ բերեց թէ կառավարութեան մէջ եւ թէ դուրսը։ Ոմանք դժգոհ էին, ընդհանրապէս, զինանշանի գաղափարից ու ոգուց, վերարտադրում էր հին, անցած դարերի աւատապետական գաղափարները, չէր համապատասխանում նոր Հայաստանի պարզ, ոամկավար, յառաջադէմ ոգուն։ Ուրիշներ գտնում էին շատ ծանր, ահեղ, աշխարհակալական, միապետական ձգտումների արտայայտիչ։ Կային մարդիկ էլ, որոնք նոյնիսկ պատմական ճշդութեան հակասող փաստեր էին գտնում զինանշանի մէջ. օրինակ, որ հայոց մէջ ընդունուած չէր եղեր երկգլխեայ արծիւը, որ Տիգրան Մեծի թագի վրայ թրոչունները եղել են աղաւնիներ եւ ոչ արծիւներ եւայլն։ Եւ վերջապէս, զինանշանը չէր գոհացնում մարդկանց գեղասիրական ճաշակին. իր մէջ պարունակում էր շատ կենդանիներ. «կատարեալ գազանանոց» սրախօսում էին ոմանք։

«Բայց եւ այնպէս, կառավարութիւնը հաստատեց ներկայացուած նախագիծը, որովհետեւ պատմական կամ գեղագիտական ուսումնասիրութիւններ անելու ժամանակ չկար։ Հաստատեց ժամանակաւոր կերպով, մինչեւ Սահմանադիր ժողով, ինչպէս եւ պետական դրօշը, բնականաբար» (3)։

Աշխարհի զանազան մայրաքաղաքներու մէջ, հոն ուր հայկական հիւպատոսարաններ հաստատուած էին, շէնքի ճակատը տեղ գրաւեց Հայաստանի Հանրապետութեան զինանշանը, իսկ շէնքին վրայ ծածանեցաւ հայկական եռագոյնը, մինչեւ այն օրը երբ վարչակարգի փոփոխութիւն տեղի ունեցաւ՝ Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ Սովետական Սոցիալիստական Հայաստանի Հանրապետութիւն։

---

(1) «Հայաստանի Հանրապետութիւն», *Ս. Վրացեան*, էջ 183։

(2) «Հայաստանի Հանրապետութիւն», *Ս. Վրացեան*, էջ 183։

(3) «Հայաստանի Հանրապետութիւն», *Ս. Վրացեան*, էջ 435 – 436։